ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 14.11.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/44

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով Հասմիկ Օհանյան Ա/Ձ-ի 25.10.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից նյութերը, պարզեց հետևյալը.

1. **<u>Հասմիկ Օհանյան Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Հասմիկ Օհանյան Ա/Ձ-ն (այսուհետ՝ նաև Ա/Ձ) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 25.10.2017թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Բողոքի առարկան և փաստացի հիմքերը.

«Ակադեմիկոս Է. Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից լաբորատոր սարքավորումների, գործիքների և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԴՓԿ-ԳՀԱՊՁԲ-17/16» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Հասմիկ Օհանյան Ա/Ձ-ն (այսուհետ նաև՝ Ա/Ձ) ցանկություն է հայտարարել մասնակցել Ընթացակարգին: Armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հայտը պատրաստելու ժամանակ առաջացել են խնդիրներ. մասնավորապես, Procurement.am կայքի օրենսդրություն բաժնում հրապարակված էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների կատարման ուղեցույցի համաձայն ընթացակարգի կառուցվածքն ունի հետևյալ բաժինները՝

ա. Պիտանելիության ծրար,

բ. Տեխնիկական ծրար,

գ. Ֆինանսական ծրար:

Սակայն, «ԴՓԿ-ԳՀԱՊՁԲ-17/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի կառուցվածքում առանձին չափաբաժինների համար «Տեխնիկական ծրար» բաժնում հնարավոր չէր լինում բեռնել փաստաթուղթ, քանի որ այդ բաժինը ցույց էր տալիս արդեն իսկ լրացված: Բացի այդ, Ընթացակարգի կառուցվածքում առկա էր «Պիտանելիության» 2 ծրար, որից առաջինում անհրաժեշտ էր կցել Հավելված 1, Հավելված 2, Հավելված 2.1 և Հավելված 10, իսկ 2-րդ ծրարում անհրաժեշտ էր կցել Հավելված 3 և Հավելված 4-ը: Քանի որ անհնար էր Ա/Ձ-ի կողմից ընտրված չափաբաժինների համար առանձին կցել տեխնիկական ծրարը, ուստի մենք կապ հաստատեցինք «ԴՓԿ-ԳՀԱՊՁԲ-17/16» ծածկագրով ընթացակարգի գնումների համակարգողի հետ և տեղեկացրինք վերոգրյալ խնդրի մասին: Վերջինիս խորհրդով Հավելված 3-ը և Հավելված 4-ը կցվեցին «Պիտանելիության» 2-րդ ծրարում: Արդյունքում armeps.am համակարգի կողմիս ստացվեց էլեկտրոնային հաղորդագրություն, որի համաձայն Հասմիկ Օհանյան Ա/Ձ-ի հայտը բեռնվել է՝ հայտը ընդունվել է կայքի կողմից և համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.10.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 3.1 կետի համաձայն՝ բոլոր մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են Ընթացակարգով սահմանված պայմաններին, բացառությամբ Հասմիկ Օհանյան Ա/Ձ-ի, քանի որ վերջինիս կողմից փաստաթղթեր չեն ներկայացվել: Հիմք ընդունելով վերոգրյալը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել Ա/Ձ-ի հայտը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.10.2017թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է ընտրված մասնակիցներին և վերջիններիս առաջարկել է կնքել պայմանագիր, սահմանված ժամկետում պայմանագրի ստորագրված նախագիծ և պայմանագրի ապահովում ներկայացնելու:

Պատվիրատուի կողմից www.gnumner.am կայքում 21.10.2017թ. ժամը 15:30-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, որի վերջնաժամկետ է սահմանվել 26.10.2017թ. ժամը 18:00-ն:

Սակայն, ARMEPS համակարգից Ա/Ձ-ի էլեկտրոնային փոստի հասցեին ստացվել է ավտոմատ ծանուցում, որի Excel ֆայլի մեջ առկա են ինչպես Ընթացակարգի բոլոր մասնակիցների հայտերով ներկայացված չափաբաժինների համար ներկայացված գնային

առաջարկները, այնպես էլ Ա/Ձ-ի կողմից ճիշտ այն չափաբաժիններով ներկայացված գնային առաջարկները, որը Ա/Ձ-ն ներկայացրել է armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով Պատվիրատուին, սակայն, որը ըստ վերջինիս արձանագրության չէր ներկայացվել, ինչի հիման վրա մերժվել էր Հասմիկ Օհանյան Ա/Ձ-ի հայտը:

Ա/Ձ-ն կարծում է, որ վերոգրյալ փաստացի ապացույցի առկայության պայմաններում անհրաժեշտ է պատշաճ ուսումնասիրել և իրավական գնահատական տալ Պատվիրատուի կողմից պատրաստված էլեկտրոնային ընթացակարգին, քանի որ նախ վերջինիս կողմից այն պատրաստվել էր թերություններով, ինչն արհեստական խոչընդոտներ է ստեղծել հնարավոր մասնակիցների համար, և երկրորդ դեպքում անհրաժեշտ է հասկանալ, եթե Ա/Ձ-ն ըստ գնահատող հանձնաժողովի փաստաթղթեր չի ներկայացրել, ապա ինչպես է հնարավոր տեսնել Ա/Ձ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները և այն զետեղել Excel ֆայլի մեջ, քանի որ միայն Հասմիկ Օհանյան Ա/Ձ-ի հայտը բացելուց հետո էր հնարավոր տեսնել գնային առաջարկները, իսկ եթե հնարավոր էր տեսնել գնային առաջարկը, ուրեմն ներկայացված է եղել փաստաթղթեր:

Բողոքի իրավական հիմքերը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

1. Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

2. Գնումների գործընթացին որևէ երկրի ռեզիդենտ հանդիսացող անձի (անձանց) մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն.

Հայտերի՝ էլեկտրոնային եղանակով փոխանցման և ստացման միջոցների նկատմամբ պարտադիր կարգով կիրառելի են հետևյալ կանոնները.

1) շահագրգիռ մասնակիցներին մատչելի են հայտերի էլեկտրոնային ձևով ներկայացման համար անհրաժեշտ հատկանիշներին (այդ թվում՝ կոդավորմանը) վերաբերող տեղեկությունները.

2) հայտերի՝ էլեկտրոնային ձևով ստացման էլեկտրոնային սարքերը պետք է երաշխավորեն ստացված տվյալների ամբողջականությունն ու գաղտնիությունը՝ նվազագույնն ապահովելով հետևյալ պայմանները.

ա. հնարավոր է հստակ որոշել հայտերի ստացման ճշգրիտ ժամն ու ամսաթիվը,

բ. նախքան տվյալների փոխանցման համար սահմանված ժամկետները՝ փոխանցված տվյալները մատչելի չեն ոչ ոքի համար,

գ. այն դեպքում, երբ խախտվել է փոխանցված տվյալների մատչելիության արգելքը՝ հնարավոր է հստակ պարզել չարտոնված մուտքը,

դ. ստացված տվյալների բացման ժամկետները կարող են սահմանել կամ փոփոխել միայն լիազորված անձինք:

ե. գնումների ընթացակարգի տարբեր փուլերում՝ ստացված տվյալներին մուտք գործելը հնարավոր է առնվազն երկու լիազոր անձանց (համակարգերի) համաժամանակյա գործողությամբ և միայն սույն կետի համաձայն սահմանված ժամկետից հետո,

զ. սույն մասի պահանջներին համապատասխան ստացված և բացված տվյալները պետք է մատչելի մնան միայն դրանց ծանոթանալու լիազորություն ունեցող անձանց համար:

Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է:

Նույն Հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները.

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Բողոքի պահանջը.

Ելնելով վորոգրյալ իրավական և փաստական հիմքերից, Հասմիկ Օհանյան Ա/Ձ-ն Գնումների բողոքարկման խորհրդին խնդրում է.

1. «Ակադեմիկոս Է.Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին և «ԴՓԿ-ԳՀԱՊՁԲ-17/16» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին արգելել գնման ընթացակարգի մասով կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ, այն է՝ կնքել պայմանագրեր:

2. Դադարեցնել «ԴՓԿ-ԳՀԱՊՁԲ-17/16»ծածկագրով ընթացակարգի արդյունքում կայացված ապայմանագիր կնքելու մասին որոշումը:

3. «ԴՓԿ-ԳՀԱՊՁԲ-17/16» ծածկագրով լաբորատոր սարքավորումների, գործիքների և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգը հայտարարել չկայացած»:

Խորհրդում Բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Հասմիկ Օհանյան Ա/Ձ-ի լիազորված ներկայացուցիչներ Հրաչյա Գալոյանը և Ռաֆայել Մկրտչյանը:

2. <u>«Ակադեմիկոս Է.Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«Ակադեմիկոս Է. Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 31.10.2017թ. թիվ 0111/95817 գրությամբ Հասմիկ Օհանյան Ա/Ձ-ի կողմից 25.10.2017թ. Խորհրդին ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

««Ակադեմիկոս Է.Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից լաբորատոր սարքավորումների, գործիքների և պարագաների ձեռքբերման նպատակով «ԴՓԿ-ԳՀԱՊՁԲ-17/16» ծածկագրով գնանաշման հարցման ընթացակարգի հայտարարությունը հրապարակվել է 2017թ. հոկտեմբերի 2-ին էլեկտրոնային գնումների (www.armeps.am) կայք էջում:

Ընթացակարգի կառուցվածքի էջը արհեստական խոչընդոտ չի եղել հնարավոր մասնակիցների համար, քանի որ ընթացակարգին մասնակցել են 11 մասնակից և

ներկայացված կառուցվածքին համապատասխան բոլոր մասնակիցները ներբեռնել են հայտը և ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթերը:

Բացման արդյունքում բոլոր մասնակիցների ներկայացրած փաստաթղթերը ներբեռնված են եղել, իսկ Հասմիկ Օհանյան Ա/Ձ-ի կողմից կցված փաստթղթերի ֆայլերը ակտիվ չեն եղել՝ հնարավոր չի եղել դրանք բացել գնահատելու նպատակով: Կապ ենք հաստատել www.armeps.am համակարգի խորհրդատուի հետ և ճշտել, որ փաստաթղթերի ներբեռնելու անհնարինությունը հայտերի մերժման հիմք է:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ Excel ֆայլում ներառված են եղել Հասմիկ Օհանյան Ա/Ձ-ի գնային առաջարկները, ապա հայտնում ենք, որ դրանք ոչ թե ներբեռնված են եղել, այլ հատ առ հատ լրացված armeps էլեկտրոնային համակարգ: Համակարգը յուրաքանչյուր գործընթացի ավարտին ավտոմատ կերպով պատրաստում է ֆայլ, որտեղ զետեղված են լինում բոլոր գնային առաջարկները, որոնք լրացված են armeps համակարգում: Պարզ է դառնում, որ Հասմիկ Օհանյան Ա/Ձ-ի հայտը բացելը առհասարակ կապ չունի excel ֆայլի ստեղծման հետ:

Հայտարարված գնանշման հարցման հրավերի 8.2 կետում հստակ նշված է եղել, որ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի համաձայն.

Մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

5. Սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող հայտերը գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

Տվյալ դեպքում Հասմիկ Օհանյան Ա/Ձ-ի կողմից կցված չի եղել տեղեկատվություն պարունակող ոչ մի ֆայլ, ներառյալ՝ գանձին առաջարկը, որի արդյունքում վերջինիս հայտը ենթակա է եղել մերժման»:

Խորհրդի նիստերին մասնակցում էին Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչներ Մարինե Պետրոսյանը և Մարիյա Գրիգորյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2017/44 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է Հասմիկ Օհանյան Ա/Ձ-ի կողմից 25.10.2017թ. Խորհրդին ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ԴՓԿ-ԳՀԱՊՁԲ-17/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԴՓԿ-ԳՀԱՊՁԲ-17/16» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 09.10.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության և 19.10.2017թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության պատճենները, «ԴՓԿ-ԳՀԱՊՁԲ-17/16» ծածկագրով ընթացակարգի արդյունքում կայացված ապայմանագիր կնքելու մասին որոշման պատճենը, Պատվիրատուի կողմից 31.10.2017թ. թիվ 0111/95817 գրությամբ հայտնած դիրքորոշումը, Հասմիկ Օհանյան Ա/Ձ-ի կողմից 13.11.2017թ. ներկայացված բողոքի լրացումը և բողոքի պահանջի փոփոխությունը.

«Ակադեմիկոս Է. Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից լաբորատոր սարքավորումների, գործիքների և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԴՓԿ-ԳՀԱՊՁԲ-17/16» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև Հասմիկ Օհանյան Ա/Ձ-ն՝ մի շարք չափաբաժինների մասով:

Հանձնաժողովը 09.10.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության՝

- 2.11 կետով արձանագրել է, որ հայտեր ներկայացված մասնակիցների թվում է նաև Հասմիկ Օհանյան Ա/Ձ-ն:
- 3.1 կետով արձանագրել է, որ բոլոր ընկերությունների կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են սահմանված պայմաններին, բացառությամբ Հասմիկ Օհանյան Ա/Ձ-ի, որի կողմից փաստաթղթեր չեն ներկայացվել, և նույն կետով մերժել է Ա/Ձ-ի հայտը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.10.2017թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանարության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է ընտրված մասնակիցներին առաջարկել կնքել պայմանագիր, սահմանված ժամկետում պայմանագրի ստորագրված նախագիծ և պայմանագրի ապահովում ներկայացնելու դեպքում:

Պատվիրատուի կողմից www.gnumner.am կայքում 21.10.2017թ. ժամը 15:30-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, որի վերջնաժամկետ է սահմանվել մինչև 26.10.2017թ. ժամը 18:00-ն:

Հասմիկ Օհանյան Ա/Ձ-ն Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ա/Ձ-ի կողմից armeps.am էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ համակարգ) միջոցով հայտը պատրաստելու ժամանակ առաջացել են խնդիրներ, մասնավորապես, ընթացակարգի կառուցվածքում առանձին չափաբաժինների համար «Տեխնիկական ծրար» բաժնում անհնար էր բեռնել փաստաթուղթ, քանի որ այդ բաժինը ցույց էր տալիս արդեն իսկ լրացված: Բացի այդ, ըստ բողոքաբերի, Ընթացակարգի կառուցվածքում առկա էին «Պիտանելիության» երկու ծրարներ, որոնցից յուրաքանչյուրում անհրաժեշտ էր կցել Հրավերի առանձին հավելվածներ: Ստեղծված խնդրի վերաբերյալ պարզաբանում ստանալու համար Ա/Ձ-ն դիմել է Պատվիրատուին, որի հորդորով Հավելված 3-ը և Հավելված 4-ը կցվել են «Պիտանելիության» 2-րդ ծրարում, ինչի արդյունքում համակարգի կողմից ստացել է էլեկտրոնային հաղորդագրություն, համաձայն որի Հասմիկ Օհանյան Ա/Ձ-ի հայտը բեռնվել է և համարվել հետագա գնահատման համար ընդունելի: Այնուհետև, Ա/Ձ-ն տեղեկանում է, որ Հանձնաժողովի 09.10.2017թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ բոլոր մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանել են Ընթացակարգով սահմանված պայմաններին, բացառությամբ Հասմիկ Օհանյան Ա/Ձ-ի, քանի որ վերջինիս կողմից փաստաթղթեր չեն ներկայացվել, ինչ հիմնավորմամբ էլ հանձնաժողովը մերժել է Ա/Ձ-ի հայտը: Սակայն, համակարգից Ա/Ձ-ն իր էլեկտրոնային փոստի հասցեին ստացել է ավտոմատ ծանուցում, որում պարունակվող Excel փաստաղթղում առկա են եղել ինչպես Ընթացակարգի բոլոր մասնակիցների հայտերով ներկայացված չափաբաժինների համար ներկայացված գնային առաջարկները, այնպես էլ Ա/Ձ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները:

Հիմք ընդունելով Բողոքով ներկայացված փաստական հանգամանքները՝ Բողոքի քննության նպատակով 31.10.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Ա/Ձ-ի ներկայացուցիչը կարծիք հայտնեց, որ Պատվիրատուի կողմից հրապարակված էլեկտրոնային ընթացակարգը եղել է թերի, պարունակել է արհեստական խոչընդոտներ հնարավոր մասնակիցների համար,

քանի որ, ըստ բողոքաբերի, եթե Հանձնաժողովի համար հնարավոր է եղել տեսնել Ա/Ձ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները և այն զետեղել Excel փաստաթղթում, ուրեմն՝ ներկայացված են եղել փաստաթղթեր, քանի որ միայն Ա/Ձ-ի հայտը բացելուց հետո հնարավոր կլիներ տեսնել գնային առաջարկները:

Նշված հարցի վերաբերյալ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված լիազորված մարմնի դիրքորոշումն ստանալու նպատակով՝ բողոքաբերի ներկայացուցիչը Խորհրդում հանդես եկավ 7 օրացուցային օրով Բողոքի քննությունը հետաձգելու միջնորդությամբ, որը Խորհրդի կողմից բավարարվեց:

Պատվիրատուի ներկայացուցիչը նշեց, որ բողոքաբերի կողմից հայտնած դիրքորոշումը, համաձայն որի ընթացակարգը եղել է թերի և արհեստական խոչընդոտներ է պարունակել հնարավոր մասնակիցների համար, անհիմն է, քանի որ ընթացակարգին մասնակցել են 11 մասնակից և բոլոր մասնակիցների կողմից ներբեռնվել են հայտերը և ներկայացվել անհրաժեշտ փաստաթղթերը: Հասմիկ Օհանյան Ա/Ձ-ի կողմից կցված էլեկտրոնային փաստթղթերը պատվիրատուն չի կարողացել բացել՝ գնահատելու նպատակով, և, ուղղորդվելով համակարգը սպասարկող պաշտոնատար անձի բանավոր խորհրդով՝ հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը, մերժել է Ա/Ձ-ի հայտը:

Ինչ վերաբերում է համակարգի միջոցով ստացված Excel փաստաղթղում Հասմիկ Օհանյան Ա/Ձ-ի ներկայացրած գնային առաջարկների առկայությանն, ապա Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ դրանք ոչ թե ավտոմատ ներբեռնված են եղել, այլ հատ-հատ լրացված են եղել էլեկտրոնային համակարգ:

Հասմիկ Օհանյան Ա/Ձ-ի կողմից 13.11.2017թ. Խորհրդին ներկայացվել է Բողոքի լրացում և Բողոքի պահանջի փոփոխություն, որում, մասնավորապես, ի լրումն Բողոքի իրավական հիմքերին նշվել է «Ակադեմիկոս Է.Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ՀՀ ֆինանսների նախարարի 17.05.2017թ. թիվ 219-Ա հրամանով հաստատված էլեկտրոնային ձևով իրականացվող ուղեցույցի խախտումը, համաձայն որի՝ գնման ընթացակարգի քարտուղարը պետք է ստեղծի Պիտանելության և Տեխնիկական ծրարներ, որոնց մանրամասն նկարագրությունը սահմանված է նույն ուղեցույցի ՄԱՍ 1-ի 1-ին կետի 10-րդ ենթակետով:

Նույն գրությամբ Հասմիկ Օհանյան Ա/Ձ-ն փոփոխել է նաև Բողոքով ներկայացված պահանջը՝ խնդրելով դադարեցնել «ԴՓԿ-ԳՀԱՊՁԲ-17/16» ծածկագրով ընթացակարգի արդյունքում կայացված ապայմանագիր կնքելու մասին որոշումը և «ԴՓԿ-ԳՀԱՊՁԲ-17/16» ծածկագրով լաբորատոր սարքավորումների, գործիքների և պարագաների ձեռքբերման

նպատակով հայտարարված գնման ընթացակարգը հայտարարել չկայացած միայն այն չափաբաժինների մասով, որոնցով հայտ է ներկայացրել Հասմիկ Օհանյան Ա/Ձ-ն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հրավերով մասնակցին տեղեկություն ներկայացնելու պայման սահմանվելու դեպքում միաժամանակ ներկայացվում են այդ տեղեկության վավերապայմանները: Նույն օրենքով սահմանված գործառույթների շրջանակներում հաղորդակցությունը կարող է իրականացվել էլեկտրոնային եղանակով, ընդ որում՝

1) հայտարարությունը և հրավերը կարող են տրամադրվել էլեկտրոնային եղանակով.

2) հրավերով նախատեսված դեպքում և կարգով հայտերը ներկայացվում են էլեկտրոնային եղանակով:

Օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի 3-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային ձևով գնումների կատարման դեպքում գործում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները՝ հաշվի առնելով նույն կարգով սահմանված առանձնահատկությունները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք

ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. մայիսի 17-ի թիվ 219-Ա հրամանով հաստատված «Էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների ուղեցույցի» համաձայն՝ ընթացակարգի կառուցվածքն ունի հետևյալ բաժինները՝

ա. Պիտանելիության ծրար,

բ. Տեխնիկական ծրար,

գ. Ֆինանսական ծրար:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Հասմիկ Օհանյան Ա/Ձ-ի 01.11.2017թ. գրավոր հարցմանն ի պատասխան տրված դիրքորոշման համաձայն՝ «ԴՓԿ-ԳՀԱՊՁԲ-17/16» ծածկագրով գնման ընթացակարգը պատրաստվել է ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. մայիսի 17-ի թիվ 219-Ա հրամանով հաստատված «Էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների ուղեցույցի» համաձայն: Միաժամանակ, նույն դիրքորոշմամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ պիտանելիության ծրարում երկու բաժինների առկայությունը խոչընդոտ չի հանդիսանում անհրաժեշտ հավելվածները կցագրելու և ներկայացնելու համար: Ընդ որում, պիտանելիության ծրարում երկու բաժինների առկայության դեպքում հնարավոր է կցագրել պահանջվող փաստաթղթերը համապատասխան դաշտերում, ինչի մասին է վկայում այն փաստը, որ ընթացակարգի թվով 11 մասնակիցներից միայն Ա/Ձ-ի հայտում ներառված փաստաթղթերը տեսանելի չեն եղել պատվիրատուի համար:

Խորհուրդն արձանագրում է, որ «ԴՓԿ-ԳՀԱՊՁԲ-17/16» ծածկագրով գնման ընթացակարգը Պատվիրատուի կողմից պատրաստվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Հասմիկ Օհանյան Ա/Ձ-ի կողմից համակարգում կցված էլեկտրոնային փաստթղթերն ակտիվ չեն եղել, այսինքն, Հանձնաժողովը դրանք բացելու և գնահատելու հնարավորություն չի ունեցել:

Այսպիսով, հաշվի առնելով, որ Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկն, ինչպես նաև այն հանգամանքը, որ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը, կամ եթե դրանք

ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը, Հասմիկ Օհանյան Ա/Ձ-ի հայտը դրանում ներառված ֆայլերի ակտիվ չլինելու հիմնավորմամբ անբավարար գնահատելով՝ գործել է իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հասմիկ Օհանյան Ա/Ձ-ի կողմից 25.10.2017թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ